Թուրքիայի քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում 1992-1994թթ.

Խաչատրյան Ռ. Ա.
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան (Հայաստան, Գյումրի)
rafik-khachatryan@inbox.ru

Վճռորոշ բառեր՝ Արցախյան պատերազմ, Թուրքիա, ռազմական օգնություն, արտաքին քաղաքականություն, հայ-ադրբեջանական հարաբերություններ, հարավկովկասյան տարածաշրջան, անվտանգություն:

Политика Турции в Нагорно-Карабахском конфликте в 1992-1994гг.

Хачатрян Р.А.
Ширакский Государственный Университет им. М. Налбандяна (Армения, Гюмри)
rafik-khachatryan@inbox.ru

Резюме: За период войны в Арцахе, Турция, руководствуясь идеями пантюркизма и панисламизма, на международных площадках занималась проазербайджанским лоббизмом – защищая его интересы в международной арене. Во время Карабахской войны Турция ввела санкции против Армении, а также затянула ее в транспортную и воздушную блокаду. Турция также оказала большую поддержку в вооружении и переподготовке азербайджанской армии. Турция накопила вооруженные силы на границе с Арменией, таким образом создавая угрозу для Армении. Но во время войны добиться перелома в свою сторону не получилось.
Ключевые слова: Арцахская война, Турция, военная помощь, внешняя политика, армяно-азербайджанские отношения, Южнокавказский регион, безопасность.

The Policy of Turkey in Nagorno-Karabakh conflict in 1992-1994

Khachatryan R.A.
Shirak State Unversity after M. Nalbandyan (Armenia, Gyumri)
rafik-khachatryan@inbox.ru

Abstract: During the war in Artsakh, Turkey, guided by the ideas of Pan-Turkism and Pan-Islamism, she was engaged in pro-Azerbaijani lobbyism at international platforms - defending its' interests in the international arena. During the Karabakh war, Turkey imposed sanctions against Armenia, and also dragged it into a transport and air blockade. Turkey also provided great support in arming and retraining of the Azerbaijani army. Turkey has amassed armed forces on the border with Armenia, thus creating a threat to Armenia. But during the war to achieve a change in their direction did not work.
Keywords: Artsakh war, Turkey, military assistance, foreign policy, Armenian-Azerbaijani relations, Southern Caucasus region, security.

Հիմնախնդրի էությունը. նոր հնարավորություններ Թուրքիայի համար:

Արցախյան հիմնախնդրի գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ այստեղ մենք գործ ունենք ոչ միայն մի կողմից իր ազատ ապրելու իրավունքի իրացման համար պայքարող ժողովրդի, իսկ մյուս կողմից՝ պատմական նպաստավոր հանգամանքների բերումով որպես պետություն ստեղծված Ադրբեջանի միջև պայքարի, այլ նաև՝ ավելի մեծ «խաղացողների» միջև աշխարհաքաղաքական բախման հետ: Դժվար է պատկերացնել Արցախյան հիմնախնդրի լիարժեք ընկալում՝ առանց այդ խաղացողների շահերի և այս հարցում վարած քաղաքականության ուսումնասիրության: Հիմնախնդրում արտաքին գլխավոր շահագրգիռ կողմերից մեկն էլ Թուրքիան է, որը ձգտում է մեծացնել իր ներկայությունը հիմնախնդրի կարգավորման գործընթացում՝ փորձելով ներկայանալ որպես արդար միջնորդ: Սակայն փաստ է, որ վերջինս և՛ Արցախյան պատերազմի տարիներին, և՛ դրանից հետո, վարել է ադրբեջանամետ քաղաքականություն:

Լինելով ի սկզբանե արհեստական պետություն, իր ստեղծումով Ադրբեջանը նախ և առաջ պարտական է Թուրքիային: Ադրբեջանի ստեղծումով Թուրքիան ցանկանում էր ուժեղացնել իր դիրքերը Կովկասում և ստեղծել պանթյուրքիզմի և պանիսլամիզմի հենա-

կետ՝ հետագայում Միջին Ասիա ծավալվելու համար: Ադրբեջանը դիտարկվում էր որպես կարևոր կամուրջ Միջին Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների հետ կապերը խորացնելու համար[1]: Իհարկե, այս ամենում իր վճռական ազդեցությունն ունեցավ նաև այն հանգամանքը, որ Առաջին Համաշխարհային պատերազմի ավարտական փուլում եղավ քեմալականների ու բոլշևիկների շահերի համընկնում:

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը Թուրքիան վարում էր համեմատաբար զուսպ քաղաքականություն Ադրբեջանի վերաբերյալ: Թուրքիան բացահայտ հետաքրքրվածություն չէր ցուցաբերում ԽՍՀՄ թյուրքալեզու ժողովուրդների նկատմամբ, չէր ձեռնարկում քայլեր, որոնք կարող էին դժգոհություն առաջացնել Մոսկվայում: Այս շրջանում պանթյուրքիզմը դուրս չէր գալիս Թուրքիայի սահմաններից, և իրենից ներկայացնում էր զուտ ներքաղաքական երևույթ, որտեղ լայնորեն տարածված էր «Թուրքիան՝ որպես վերջին անկախ թյուրքական պետություն» կարգախոսը[2]: Թեպետ կա վարկած, որ ԽՍՀՄ գոյության տարիներին Թուրքիայի արտաքին գործերի գերատեսչությունը փորձել է գաղտնի կերպով կապեր պահել Ադրբեջանի հետ՝ դա անելով Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներում ԽՍՀՄ դեսպանություններում ծառայող ադրբեջանցի ներկայացուցիչների միջոցով:

ԽՍՀՄ-ի թուլացումից և հետագա անկումից հետո, առաջացած նոր պայմաններում, Թուրքիան կտրուկ փոխեց իր ավանդական չմիջամտման քաղաքականությունը, և, վերագնահատելով նոր արտաքին քաղաքական պայմանները, անցավ Ադրբեջանի նկատմամբ առավել ակտիվ արտաքին քաղաքական կուրսի: Թուրքիայի նոր արտաքին քաղաքական ռազմավարությունը որոշ ուսումնասիրողներ անվանում են նեոօսմանիզմի, ինչը ենթադրում է թուրքական քաղաքական, տնտեսական և մշակութային ներթափանցում նախկին Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող երկրներ: Նեոօսմանիզմի ի հայտ գալը պատահական չէր. այն տրամաբանական շարունակությունն էր նախագահ Թ. Օզալի քաղաքականության, ով ձգտում էր վերանայել ավանդական քեմալական արտաքին քաղաքական ռազմավարությունը: Իսկ այս ամենի համար առկա էին բարենպաստ պայմաններ. վերացել էր այն պատնեշը, որը երկար տարիներ զսպում էր Թուրքիային: Թ. Օզալը, ելույթ ունենալով թուրքական խորհրդարանում, ասել է. «ԽՍՀՄ փլուզումը Թուրքիային ընձեռնել է պատմական հնարավորություն դառնալու տարածաշրջանային տերություն»[3]:

Թուրքիայի «Արցախյան» քաղաքականության ձևավորումը:

Ակտիվացան շփումները թյուրքալեզու ժողովուրդների հետ: Այս շրջանում Թուրքիայում ստեղծվեց պատրանք, ըստ որի շուտով կհայտնվի «թյուրքական աշխարհը, որը կձգվի Ադրիատիկ ծովից մինչև Չինական մեծ պարիսպ»[4]: 1991 թվականի նոյեմբերի 9-ին Թուրքիան առաջինը ճանաչեց Ադրբեջանի անկախությունը, ճանաչեց նաև միջինասիական թյուրքալեզու հանրապետությունների անկախությունը: Ակտիվացան երկկողմ այցելությունները, միայն 1992 թ. ընթացքում Թուրքիայի արտգործնախարար Հ. Չետինը կատարեց 44 այցելություն Կովկաս և Միջին Ասիա:

Արցախյան պատերազմը նոր «հնարավորություններ» ստեղծեց Թուրքիայի համար: Թուրքիան, օգտագործելով իր ազդեցությունը թյուքալեզու երկրներում և իսլամական աշխարհում, ինչպես նաև շահարկելով թյուրքական և իսլամական համերաշխության գաղափարները, փորձ կատարեց ստեղծել հակահայկական ճակատ: Թյուրքալեզու պետություններն իրենց ընդհանուր դիրքորոշումն արցախյան հարցի վերաբերյալ առաջին անգամ հայտնեցին 1992 թ. մայիսին Աշխաբադի գագաթնաժողովին, որը հրավիրվել էր Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի նախաձեռնությամբ: Նրանք հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որում կոչ արեցին «դուրս բերել հայկական զինված ուժերը Շուշիից, և ղարաբաղյան հարցը լուծել միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն»[5]:

---

[1] Տե՛ս *Ф. Абосзода*: Как говорил еще Деникин, Азербайджан незаконнорожденное государство, в котором все искусственно, 07.12.2012 www.panorama.am/ru/news/2012/12/07/aboszoda/627077

[2] Տե՛ս *Киреев Н.,* История Турции: XX век, М., 2007, էջ 137-138

[3] Տե՛ս *Тарасов С.*, Азербайджан и Турция: кому достались потрепанные пантюркистские знамена, 07.03.2016 https://regnum.ru/news/2093069.html

[4] Տե՛ս *Lerrabe S.,* Turkish foreign policy in Age of Uncertainty, N.Y., 2003, էջ 99

[5] Տե՛ս Независимая газета, 14.05.1992 https://yeltsin.ru/uploads/upload/newspaper/1992/nzv05_14_92/index.html

Թուրքիան փորձեց արցախյան հարցը ներառել նաև 1992 թ. նոյեմբերի սկզբին Անկարայում հրավիրված թյուրքալեզու երկրների առաջին գագաթնաժողովում: Սակայն, չնայած գործադրված բոլոր ջանքերին, միջինասիական թյուրքալեզու երկրները կտրուկ հրաժարվեցին գագաթնաժողովի ընթացքում արցախյան հարցի վերաբերյալ առանձին փաստաթուղթ ընդունելուց և Հայաստանի նկատմամբ միակողմանի միջոցներ ձեռնարկելուց: Թյուրքալեզու երկրները չէին ձգտում հանդես գալ հակահայ գործողություններով, խուսափելու համար Ռուսաստանի հակազդեցությունից, որը սկսել էր իր դիրքերը վերականգնել Միջին Ասիայում:

Թուրքիան արցախյան հարցում փորձում էր ստանալ նաև իսլամական երկրների աջակցությունը, ինչպես ժամանակին ստացել էր կիպրական հարցում: Սրանով Թուրքիան ցանկանում էր ճնշում գործադրել Արևմուտքի վրա, որին մեղադրում էր քրիստոնյա հայերին պաշտպանելու և հայամետ քաղաքականության մեջ. այսպիսով կոնֆլիկտին փորձվում էր տալ կրոնական բնույթ: Սակայն իսլամական պետություններն ընդհանուր առմամբ շահագրգռված չէին արցախյան հարցով և բացի մի քանի ձևական հայտարարություններից, կոնկրետ գործողությունների չդիմեցին: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ թյուրքական և իսլամական համերաշխության գործոնները լուրջ դեր չխաղացին արցախյան հարցում, այլ միայն լրացուցիչ օգնություն էին ադրբեջանական տեսակետները միջազգային հանրությանը ներկայացնելու գործում:

Ի տարբերություն այլ հետխորհրդային երկրների նկատմամբ վարած Թուրքիայի քաղաքականության, Հայաստանի հետ հարաբերություններում առկա էր երկկողմ զգուշավորություն, որն առաջին հերթին պայմանավորված էր Հայոց Ցեղասպանությամբ և հայկական պահանջատիրությամբ: Միևնույն ժամանակ, Հայաստանի ղեկավարությունը անկախության առաջին տարիներին Թուրքիայի նկատմամբ փորձում էր վարել համեմատաբար մեղմ քաղաքականություն, որը հիմնված էր պրագմատիկ հաշվարկների վրա: Թուրքիան դիտվում էր որպես պատուհան դեպի Եվրոպա, և նրա հետ առևտրա-տնտեսական հարաբերությունները կբարելավեին Հայաստանի տնտեսական վիճակը: Սակայն Թուրքիան, առաջիններից մեկը ճանաչելով Հայաստանի անկախությունը 1991 թ.-ի դեկտեմբերի 24-ին, հրաժարվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ՝ առաջ քաշելով 3 նախապայման.

- ✓ *Ճանաչել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը դե ֆակտո գործող սահմաններով*: Սա, իհարկե, նշանակում էր խոստանալ, որ հետագայում երբևէ Հայաստանը վերջինիս նկատմամբ տարածքային պահանջներ չի ներկայացնի:
- ✓ *Հրաժարվել Օսմանյան Կայսրությանը ցեղասպանություն գործելու մեջ մեղադրելուց և Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացից*.
- ✓ *Դադարեցնել «ագրեսիվ քաղաքականությունը» Ադրբեջանի նկատմամբ և ճանաչել Լեռնային Ղարաբաղը վերջինիս տարածքային ամբողջականության սահմաններում*[6]:

1992 թվականի սկզբին ԵԱՀԿ Փարիզի գագաթնաժողովի ժամանակ թուրքական կողմը փորձ կատարեց խոչընդոտել Հայաստանի անդամակցությանը այդ կառույցին. Թուրքական կողմը դա հիմնավորում էր իբր թե առկա հայկական կողմի տարածքային պահանջներով: Թուրքիան սպառնում էր վետո կիրառել, եթե Հայաստանը չվավերացնի Կարսի պայմանագիրը: Ի վերջո Թուրքիան նահանջեց՝ հաշվի առնելով երրորդ երկրների կողմից Ադրբեջանի՝ ԵԱՀԿ-ին անդամակցելուն խոչընդոտելու հնարավորությունը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ Թուրքիան չէր ցանկանում լիովին խզել կապերը Հայաստանի հետ: Թուրքիան մի քանի անգամ փորձեց հանդես գալ արցախյան հարցի կարգավորմանն ուղղված միջնորդություններով: 1992 թ.-ին Թուրքիան մտավ Մինսկի խմբի երկրների կազմի մեջ: 1992 թ.-ի փետրվար-մարտ ամիսներին Թուրքիան Ռուսաստանի հետ համատեղ հանդես եկավ նախաձեռնությամբ կրակի դադարեցման վերաբերյալ, որը, սակայն, հետագայում տապալվեց թուրքական կողմի առաջ քաշած հայկական ուժերի՝ Լաչինի միջանցքից դուրս բերելու նախապայմանի պատճառով: Թուրքիան հանդես եկավ նաև տարածքների փոխանակման և միջանցքների ստեղծման առաջարկով: Տարածքային

[6] Տե՛ս *Демоян Г.*, Внешняя политика Турции и Карабахский конфликт, Ер., 2013, էջ 151-152

փոխանակման ծրագիրը, որն առաջ էր քաշվել դեռևս ամերիկացի վերլուծաբան Փոլ Գոբլի կողմից, ենթադրում էր փոխանակում զանգեզուրյան և լաչինյան միջանքների միջև, որն, ըստ էության, ամենաշատը ձեռնտու էր Թուրքիային[7]: Այդ միջացքով Թուրքիան կկապվեր Ադրբեջանի և միջինասիական թյուրքալեզու երկրների հետ:

Պաշտոնական Անկարան նաև ձգտում էր ունենալ իր ռազմական ներկայությունը կոնֆլիկտի գոտում: Այդ նպատակով 1993 թ.-ի հուլիսին հանդես եկավ կոնֆլիկտի գոտի խաղաղապահներ մտցնելու առաջարկով: Ըստ այս ծրագրի, այլ երկրների խաղաղապահների հետ մեկտեղ Արցախ պետք է մտնեին նաև թուրքական խաղաղապահ ուժեր: Այս նախաձեռնությանը վճռականորեն դեմ հանդես եկավ արցախյան կողմը: Այս կապակցությամբ ԼՂՀ արտգործնախարար Ա. Ղուկասյանը հայտարարեց. «Թուրքիայի ձգտումները ակտիվացնել իր դերը կոնֆլիկտի կարգավորման գործում դիտվում է որպես հարմար պատրվակ ավելացնելու թուրքական ռազմական ուժերի քանակը Ադրբեջանում: Պետությունը, որը շարունակում է Հայաստանի շրջափակումը և զենք ու ռազմական խորհրդատուներ է ուղարկում Ադրբեջան, չի կարող հանդես գալ խաղաղապահի դերում»[8]:

Ըստ էության, թուրքական միջնորդությունները նպատակ ունեին լուծել արցախյան հարցը Ադրբեջանին ձեռնտու պայմաններով՝ հաշվի առնելով նաև Թուրքիայի շահերը և պանթյուրքական նկրտումները: Տեղին է հիշել, որ այսօր էլ Թուրքիայի քաղաքականությունն այս հարցում մնացել է գրեթե ամփոփոխ:

Թուրքիան ռազմական գործողությունների փուլում:

Արցախյան պատերազմին նախորդող շրջանում Թուրքիան զբաղեցնում էր չեզոք դիրքորոշում՝ համարելով արցախյան հարցը ԽՍՀՄ ներքին գործ: Սակայն սկսած 1990 թ.-ի սկզբներից Թուրքիան կտրուկ ակտիվացրեց իր գործողություններն և սկսեց Ադրբեջանին տրամադրել բազմակողմանի դիվանագիտական, տնտեսական, ռազմավարական և ռազմա-տեխնիկական օգնություն: Արդեն 1992 թ.-ի առաջին ամիսներին հայտնի դարձավ, որ թուրքական նկրտումները Միջին Ասիայի նկատմամբ մեծապես կախված են արցախյան հակամարտությունից: Թուրքիան իր կողմից ձեռնարկած խաղաղապահ միջնորդությունների հետ մեկտեղ միաժամանակ Բաքվին ցուցաբերում էր ռազմական աջակցություն: Ռազմական աջակցությունը չէր սահմանափակվում միայն զինամթերքի և զինտեխնիկայի տրամադրումով. Թուրքիան ադրբեջանցի սպաներին և զինվորներին ուսուցում էր ինչպես իր ռազմական ակադեմիաներում, այնպես էլ՝ Ադրբեջանի տարածքում իր կողմից ստեղծված ռազմական ճամբարներում[9]: Այսպիսով, Թուրքիան իր վրա վերցրեց Ադրբեջանի բանակաշինության գլխավոր դերը: Բացի որոշ թուրքական ջոկատների անմիջական մասնակցությունից արցախյան պատերազմին, թուրքական բանակի մոտ 150 բարձրաստիճան սպաներ, այդ թվում և 10 թոշակի անցած գեներալներ, 1992 թ.-ի սկզբներից ակտիվորեն մասնակցություն ունեցան ռազմական գործողությունների նախապատրաստմանը և ադրբեջանական բանակի գրոհային և հետախուզական ստորաբաժանումների ուսուցմանը[10]:

Ռազմական կառույցներին զուգահեռ, Ադրբեջանում ակտիվ գործունեություն էր ծավալում թուրքական ազգային հետախուզական կազմակերպությունը (MIT), որն ակտիվ համագործակցում էր պանթյուրքական կազմակերպությունների, հատկապես, թուրքական ծայրահեղ ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպության ադրբեջանական թևի հետ: Այս կազմակերպություններն ակտիվ մասնակցություն են ունեցել արցախյան պատերազմին: Ըստ տվյալների, 1992թ.-ին Նախիջևանում և Ադրբեջանի այլ շրջաններում տեղակայված էին մոտ 3000 թուրք վարձկաններ և կամավորականներ[11]:

Բացի մարդկային և տեխնիկական աջակցությունից, Թուրքիան Ադրբեջանին տրամադրում էր նաև ռազմավարական աջակցու-

[7] Տե՛ս «Փաստ» օրաթերթ, 29.07.2017 http://nyut.am/?p=140597&l=am

[8] Տե՛ս *Манасян А.,* Карабахский конфликт: ключевые понятия и хроника, Ер., 2005, էջ 207-208

[9] Տե՛ս *Демоян Г.,* Турция и Карабахский конфликт, Ер., 2006, էջ 109-110

[10] Տե՛ս *Баусин Л.*, Почему Анкара поддерживает Баку/ Азия и Африка сегодня, No. 3, 1993, էջ 40-41

[11] Տե՛ս *Սաֆարյան Դ., Մելիքյան Գ., Ոսկանյան Վ., Սաֆարյան Ա.*, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Եր., 2017, էջ 44-47

թյուն: Հայ-թուրքական հարաբերություններում աճող լարվածության պայմաններում, զորավարժությունների պատրվակով, թուրքական կողմը Հայաստանի սահմանների մոտ ուղարկեց խոշոր ռազմական ուժեր: Այս գործողությունն ուժի ցուցադրման նպատակ ուներ և միտված էր վախեցնելու հայկական կողմին և հնարավորություն չտալ ամբողջությամբ կենտրոնանալ արցախյան ճակատի վրա: 1992 թ.-ի գարնանը լարված իրավիճակ էր ստեղծվել հայ-ադրբեջանական սահմանի նախիջևանյան հատվածում: Կար թուրքական ներխուժման վտանգ: Ելնելով ստեղծված բարդ իրավիճակից, 1992 թ.-ի մայիսի 20-ին ԱՊՀ Միացյալ ռազմական ուժերի գլխավոր հրամանատար մարշալ Ե. Շապոշնիկովը հայտարարեց. «Եթե ղարաբաղյան հակամարտությունում ավելանա ևս մեկ կողմ, մենք կհայտնվենք երրորդ համաշխարհայինի շեմին»[12]: Համոզված ենք, որ ռուսական կողմի կոշտ դիրքորոշումն իր կարևոր ազդեցությունն ունեցավ Թուրքիայի՝ ռազմական գործողություններին դե յուրե միանալու և երկրորդ ճակատ բացելու հարցերում բացասական որոշում կայացնելու հարցում:

Սակայն, չնայած այս զգուշացմանը, Թուրքիան շարունակում էր ռազմական օգնություն ցուցաբերել Ադրբեջանին: Կարծում ենք, որ 1992 թ.-ի ամռանը ադրբեջանական բանակի հաջող հարձակման գործում մեծ էր թուրք կամավորների և տեխնիկական աջակցության դերը:

1993 թ.-ի ապրիլին Քելբաջարի ազատագրումից հետո, Թուրքիայի նախագահ Թ. Օզալը կրկին հանդես եկավ թուրքական ռազմական ուժերը Հայաստանի դեմ օգտագործելու առաջարկով: Պատժամիջոցներ սահմանվեցին Հայաստանի նկատմամբ: Թուրքիայի նախագահն այս առիթով ասել է. «Այլևս Ղարաբաղյան խնդիր չկա, կան ՀՀ նկրտումները Մեծ Հայաստանի վերաբերյալ: Կարծում եք այստեղ կա՞նգ է առնելու, ուրիշ բան չի՞ անելու…: Ինձ մի հարցրեք՝ ՀՀ մտնել պետք է, թե՝ ոչ, բայց Թուրքիան պետք է լավ հաշվարկի իր քայլերը»[13]: Այս հայտարարությունից հետո թուրքական սահմանապահ ուժերը, որոնք մտնում էին երրորդ բանակի մեջ, բերվեցին մարտական վիճակի, որպեսզի առաջին իսկ հրամանի դեպքում անցնեին հայկական սահմանը: Մեծացավ նաև Ադրբեջանին տրամադրվող թուրքական ռազմա-տեխնիկական աջակցության ծավալը: 1993 թ.-ի հուլիսին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը Աղդամի շրջանի Շահբուլաղ գյուղում հայտնաբերեցին թուրքական արտադրության չօգտագործված զինամթերքի պահեստ, այն որպես թուրքական օգնության ապացույց ներկայացվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆայելիին[14]:

Թուրքական սպաները, ովքեր Հեյդար Ալիևի իշխանության գալուց հետո արտաքսվել էին երկրից, վերադարձան Ադրբեջան և կարևոր դիրք զբաղեցրեցին ռազմական գործողությունների նախապատրաստման գործում: Պարզաբանենք, որ Հ. Ալիևին նախորդած Ադրբեջանի ղեկավար Ա. Էլչիբեյն աչքի էր ընկնում բացահայտ պրոթյուրքական արտաքին քաղաքական գծով, ինչը ամենևին էլ չէր բխում Ռուսաստանի շահերից: Ուստի, գալով իշխանության, Հ. Ալիևը թուրք սպաներին արտաքսեց երկրից՝ այս քայլով ցանկանալով ստանալ Մոսկվայի աջակցությունը: 1993թ. երկրորդ կեսին արդեն Ադրբեջանի նախագահը որոշ չափով փոխեց իր քաղաքական տակտիկան Թուրքիայի նկատմամբ:

1993 թ.-ի սեպտեմբերին հերթական անգամ նկատվեցին թուրքական զինված ուժերի կուտակումներ հայ-թուրքական սահմանին: Թուրքիան, անհանգստանալով արցախյան զինված ուժերի հաջողություններից, հանդես եկավ պաշտոնական հայտարարությունով: Դրանցում կոչ էր արվում առանց նախապայմանների դուրս բերել հայկական զինված ուժերը «գրաված» տարածքներից: Միաժամանակ պաշտոնական Անկարան ակնարկեց կոնֆլիկտին իր հնարավոր միջամտության մասին: Արդեն սեպտեմբերի 5-ի լույս 6-ի գիշերը Թուրքիայի կողմից կրակ բացվեց Արտաշատի ջոկատի 8-րդ ուղեկալի ուղղությամբ[15]:

Հայաստանում Հունաստանի նախկին դեսպան Լեոնիդաս Խրիզանթոպուլոսն իր հուշերում գրում է, որ 1993թ.-ի հոկտեմբերի սկզբին թուրքական կողմը ցանկանում էր օգտագոր-

[12] Տե՛ս Независимая газета, 14.05.1992 https://yeltsin.ru/uploads/upload/newspaper/1992/izv05_22_92/index.html

[13] Տե՛ս *Արշակյան Գ.*, Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ., Եր., 2009, էջ 66

[14] Տե՛ս *Գասպարյան Ս.*, Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001, էջ 112-113

[15] Տե՛ս *Հակոբյան Թ.*, Հայերը և թուրքերը: Պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն, Եր., 2012, էջ 307

ծել Ռուսաստանի խորհրդարանական ճգնաժամը՝ Հայաստան ներխուժելու համար: Համաձայն Ֆրանսիական հատուկ ծառայությունների տեղեկությունների, որոնք հետագայում հաստատվեցին նաև Հայաստանում ԱՄՆ դեսպանի կողմից, Ռուսաստանի խորհրդարանի նախագահ Ռ. Խասբուլատովը նախապես գաղտնի համաձայնություն ուներ Թուրքիայի վարչապետ Թ. Չիլլերի հետ: Եթե Խասբուլատովին հաջողվեր դիմակայել Բ. Ելցինին, ապա նա ռուսական սահմանապահ զորքերին հանելու էր Կովկասից և Թուրքիային թույլ էր տալու սահմանափակ ներխուժումներ իրականացնել Հայաստանում՝ պատրվակելով քրդական հարցը[16]:

Մինչ Թուրքիան հարմար առիթի էր սպասում Հայաստան ներխուժելու համար, հայկական ուժերը Արցախում հաջողությամբ շարունակում էին իրենց առաջխաղացումը: 1993 թ.-ի դեկտեմբերի կեսերին ադրբեջանական բանակը, համալրվելով թուրք սպաներով և վարձկաններով, սկսեց ձմեռային մեծածավալ հարձակումը: Հարձակման սկզբում մարդկային և տեխնիկական մեծ կորուստների գնով Ադրբեջանը որոշակի հաջողություններ է ունենում, սակայն 1994 թ.-ի փետրվարին հայտնի դարձավ, որ Ադրբեջանի հերթական հարձակումը դատապարտված է ձախողման:

Ռազմական գործողությունների սրման պայմաններում, նույն թվականի փետրվարի 8-12 Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևն այցելեց Թուրքիա: Վերջինիս նախագահ Ս. Դեմիրելի հետ հանդիպման ժամանակ Հ. Ալիևը նշեց, որ Ադրբեջանը չի ցանկանում Արցախյան հիմնախնդրից դուրս մղել Թուրքիային, ընդհակառակը՝ անհրաժեշտ է պնդել, որ հակամարտության գոտում խաղաղապահական զորքերի տեղակայման մանդատը տրվի միայն ԵԱՀԿ Մինսկի Խմբի մանդատով[17]: Այս պարզաբանման հիմքում ընկած էին այն լուրերը, որ հակամարտող կողմերը կարող են առանց Մինսկի Խմբի հետ համաձայնեցնելու խաղաղապահական ուժեր տեղակայելու մանդատը տալ Ռուսաստանին: Բնականաբար, սա չէր բխում Թուրքիայի շահերից, քանի որ դրանով վերջինիս ազդեցությունը տարածաշրջանում կտրուկ կնվազեր:

1994 թվականի փետրվարը, փաստացիորեն, Ադրբեջանի վերջին փորձն էր Արցախյան պատերազմի ժամանակ բեկում մտցնելու ռազմաճակատում: Դրանից հետո հակամարտության կարգավորման շուրջ բանակցային գործընթացը թևակոխեց զարգացման որակապես նոր փուլ, որտեղ Թուրքիան, փաստացիորեն, մղվեց երկրորդ պլան: Իսկ առաջնագծում հայտնվեցին Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսների արդյունահանման հնարավորություններով ոգեշնչված արևմտյան պետությունները, ինչպես նաև՝ ներքին ճգնաժամը հաղթահարած և տարածաշրջանում իր քաղաքական ազդեցությունը ոչ մեկին զիջել չպատրաստվող Ռուսաստանը:

Հաշվի առնելով Թուրքիայի ռազմական հնարավորությունները, Ադրբեջանին տրված ռազմական օգնությունը կարելի է համարել սահմանափակ: Այն բավարար չեղավ ռազմաճակատում բեկում մտցնելու համար: Թուրքիան արցախյան պատերազմի ընթացքում, ի աջակցություն Ադրբեջանի, Հայաստանի սահմանների մոտ դեմոնստրատիվ կերպով բաշխեց իր ռազմական ուժերը, անուղղակի կերպով սպառնալով Հայաստանի անվտանգությանը: Թուրքիան գնաց նաև տնտեսական պատժամիջոցների՝ ցամաքային և օդային շրջափակման ենթարկելով Հայաստանին: Ընդհանուր առմամբ, ամփոփելով Թուրքիայի մասնակցությունը արցախյան պատերազմին, կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնական ուղղությունները.

- Հայաստանի տեղեկատվական մեկուսացում և հակահայ դաշինքների ստեղծում,
- ադրբեջանամետ տեսակետների լոբբինգ միջազգային հարթակներում,
- Հայաստանի տրանսպորտային և էներգետիկ շրջափակում,
- Ադրբեջանին ռազմական օգնության տրամադրում,
- Ռազմական ուժի ցուցադրում և ներխուժման սպառնալիք:

Փաստորեն, ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան հնարավորություն ստացավ իրացնելու իր արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը՝ թյուրքական վեկտորը: Դրա համար ստեղծված աշխարհա-

[16] Տե՛ս *Chrysanthopoulos L.*, Caucasus Chronicles. Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994, Princeton and London, Gomidas Institute Books, 2002, էջ 76-78

[17] Տե՛ս *Սաֆարյան Դ., Մելիքյան Գ., Ոսկանյան Վ., Սաֆարյան Ա.*, նշվ. աշխ., էջ 48

քաղաքական նպաստավոր պայմաններին գումարվեց նաև Արցախյան հիմնախնդիրը, որտեղ Թուրքիան անմիջապես փորձեց գրավել արբիտրի դերը: Հենվելով «մեկ ազգ, երկու պետություն» գաղափարի վրա, Թուրքիան փորձում էր ստանձնել Ադրբեջանի մեծ եղբոր դերը: Թուրքիայի այս քաղաքականությունը մեծ աջակցություն էր գտնում հատկապես Ա. Էլչիբեյի նախագահության շրջանում, սակայն Հ. Ալիևի իշխանության գալուց հետո թուրք-ադրբեջանական հարաբերություններում որոշակի սառեցում նկատվեց:

Արցախյան պատերազմի տարիներին Թուրքիայի մեծաքանակ ֆինանսական, տեխնիկական, քաղաքական ու ռազմական օգնությունն Ադրբեջանին պատերազմական որոշ դրվագներում ուժեղացրեց վերջինիս դիրքերը, սակայն այդպես էլ չկարողացավ բեկել դրա ընթացքը: Թուրքիան չկարողացավ դառնալ հակամարտության կարգավորման գործընթացում հիմնական «խաղացող», իսկ 1993 թ.-ի երկրորդ կեսից այս հարցում իր դիրքերն ամբողջությամբ զիջեց Ռուսաստանին: Փաստորեն, Արցախյան հակամարտությունում տեղի ունեցավ երկու ռեգիոնալ տերությունների շահերի բախում, որտեղ Թուրքիան ստիպված էր զիջելու:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Արշակյան Գ.**, Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ., Եր., 2009
[Arshakyan G., Turkey's Policy in The Sauthern Caucasus in 1991-2001, Yerevan, 2009]
2. **Գասպարյան Ս.**, Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001
[Gasparyan S., Karabakh War, Yerevan. 2001]
3. **Հակոբյան Թ.**, Հայերը և թուրքերը: Պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն, Եր., 2012
[Hakobyan T., Armenians and Turks. War, Cold War, Diplomacy, Yerevan, 2012]
4. **Սաֆարյան Դ., Մելիքյան Գ., Ոսկանյան Վ., Սաֆարյան Ա.**, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Եր., 2017
[Safaryan D., Melikyan G., Voskanyan V., Safaryan A., The Nagorno-Karabakh Question in Turkey's public-political discourse, Yerevan, 2017]
5. **Манасян А.**, Карабахский конфликт: ключевые понятия и хроника, Ер., 2005
[Manasyan A., Karabakh conflikt: key concepts and chronicles, Yerevan, 2005]
6. **Баусин Л.**, Почему Анкара поддерживает Баку/ Азия и Африка сегодня, No. 3, 1993
[Bausin L., Why Ankara supports Baku? / Asia and Afrika Today, N. 3, 2003]
7. **Демоян Г.**, Турция и Карабахский конфликт, Ер., 2006
[Demoyan H., Turkey and Karabakh conflict, Yerevan, 2006]
8. **Демоян Г.**, Внешняя политика Турции и Карабахский конфликт, Ер., 2013
[Demoyan H., Turkey's Foreign Policy and Karabakh conflict, Yerevan, 2013]
9. **Киреев Н.**, История Турции: XX век, М., 2007
[Kireev N., History of Turkey: 20th century, Moscow, 2007]
10. **Chrysanthopoulos L.**, Caucasus Chronicles. Nation-Building and Diplomacy in Armenia, 1993-1994, Princeton and London, Gomidas Institute Books, 2002
11. **Lerrabe S.**, Turkish foreign policy in Age of Uncertainty, N.Y., 2003